եկեղեցւոյ ձեռնտուութեամբ ժողովրդականաց, որ և խոստացաւ ձեռնարկել զշինութիւնն զկնի Ցարութեան։ — Բայց անդանօր և զմի Հոգևոր ծխական դպրոց՝ յեկամուտ նորին նշանակելով զտոկոսիս հազար հինգ հարիւր րուբլեաց կտակելոց ի հանգուցելոյ Պօղոսէ Աղէքսանեանց ի սոյն նպատակ՝ և զկամաւոր նուէրս ժողովրդոց յերկրային բերոց իւրեանց. այժմ ուսանին ի դպրոցի անդ մանկունք տասն և հինգ, որոց ուսուցանէ միայն զՀայոց լեզու Ցարութիւն քահանայն Սափարեանց, զոր Կոնսիստորիայս նշանակեալ է յատամանակեայ հոգաբարձութիւն նոցա մինչ ցձեռնադրութիւն սեփհական քահանայի իւրեանց։

Երրորդ՝ յայց եղե և զեղջն Բիլվարու, որ անկանի յարևելահարաւային կողմն Դուրայու քաղաքին վերստ հեռաւորութեամբ, շրջապատեալ գեղօրէից տաճկաց. վարին ընդ միմեանս ի լեզու և ի տարազ կենցաղավարութեան տաճկաց. տունք Հայոց ի սմա են եօթանասուն և չորս, բացի և աստանօր զմի Հոգևոր ծխական դպրոց յեկամուտ նմին նշանակելով զհանգանակեալ ի ձեռըն Աշուղեանց Յովսէփ քահանայի և պ. Միրզաջանի Յովհաննէսեանց զնուիրագրամն և տարեկան հարիւր յիսուն րուբլի տուրս Մարգասիրական ընկերութեան Բագուայ. այժմ ուսանին ի դպրոցի անդ մանկունք քսան և մի։

Չորրորդ՝ յայց եղե և քաղաքին Դարբանդու, ուրանօր առ սակաւութեան հայ ժողովրդականաց ոչ գոյր Հոգևոր դպրոց, այլ տեղական Արսէն քահանայն տէր Ղազարեան մասնաւոր իմն եղանակաւ ժողովեալ ի տուն իւր զերկսեռ մանկունս Հայոց ուսուցանէր ձրիապէս զկրօնս, զՀայոց և Ռուսաց լեզուս, զՀայոց պատմութիւն, զԹուաբանութիւն և զվայելչագրութիւն. համաձայն հաւանութեամբ ժողովրդոց հանգանակեցաւ հազար հինգ հարիւր րուբլի ի շինութիւն երկսեռ դպրոցաց և Առաջնորդարանի ի սրահի նորակառոյց եկեղեցւոյ զկնի Ցարութեան։

Զեկեղեցի սոցին գտի ի պայծառ և ի բարեկայելուչ դրութեան ըստ ամենայնի և զժողովրդականս զերմեռանդս յեկեղեցասիրութիւն և յազգասիրութիւն շնորհիւ ուսումնազէտ և բարեպաշտ երիտասարդ Արսէն քահանայի տեղւոյն։

Հինգերորդ՝ յայց եղե և երկսեռ Հոգևոր դպրոցացն Բագուայ քաղաքի, զորս գտի ի բարեկարգ և յառաջադէմ վիճակի շնորհիւ Մարդասիրական ընկերութեան Հոգաբարձուաց, մանաւանդ բարեպաշտ և ուսումնազէտ Խորէն քահանայի Միրզաբէկեանց, որ անձնանուիրաբար ծառայէ յառաջադիմութեանց դպրոցացս։ Ուսանողք ի սոյնս ծխական Հոգևոր դպրոցի են ութսուն և չորս՝ և ուսուցիչք չորք։

Եկեղեցի սոցա պայծառագոյն ևս է քան զամենայն եկեղեցիս վիճակիս և առաւել բարեզարդեալ ներքուստ և զմայլելի ժամերգութեամբ երաժշտական խմբից, զոր անխոնջ աշխատութեամբ պատրաստեալ է ձայնագրապէտ դպիր Երեմիայն մինչև գրուել և ժողովել յեկեղեցի և զօտարազգիս որպէս ականատես եղէ։

Վեցերորդ՝ ծխական օրիորդական դպրոցն զըտանի յառաջադէմ և ի բարեկարգ դրութեան ըստ ամենայնի շնորհիւ օժանդակիչ ընկերութեան տեղւոյս, մանաւանդ Հոգաբարձու և գանձապահ Պ. Յովհաննիսի Խալաֆեանց, որ յօրէ բացման դպրոցի կատարէ զյիշեալ պաշտօնսն ամենայն հաւատարմութեամբ և անձնանուէր ծառայութեամբ, զորմէ փութացի ասել՝ թէ խարիսխ իմն է հաստատութեան դպրոցիս այսորիկ. ուսանողուհիք ի սմին են եօթանասուն և ուսուցիչք հինգ, որ պարապին բարեխղճաբար։ . . . . .

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Ի ՆՊԱՍՏ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ՀԱՅՈՑ ԵՐԵՒԱՆԱՅ.

Երևանայ Հայոց Օրիորդաց Դպրոցին ի նպաստ յանցելում ամի եղած բարեսէր նուիրատուաց և ներկայ տարւոյն սկսեալ տարեկան կանխավճար մի մի նուէր տուող բարեպաշտ անձանց հետեւեալ ցուցակը հրատարակել Թախանձանօք խնդրուած է։

ՑՍԻ Լ.Ն.

	ՐՈՒ.
Տիրուհի Մելիք Աղամալեանց	25
Մարիամ Վարշամեանց	15
Ասիլիան Առաքելեանց	15
Մարիամ Լունկեվիչ	10
Անանի Գ.օրգանեանց	20
Օլգայ Երզնկեանց	10
Սոնա Գ.օրգանեանց	10
Եկատարինէ Դեհկարխանեանց	20
Եղիսաբէթ Մնացականեանց	15
Վառինկայ Խուդաբաղչեանց	10
Սոնայ Ստեփանեան	15
Շուշինկայ Եղիազարեանց	20
Վառվառ Ջալալեանց	10
Համար Եղիազարեան	20
Եղիսաբէթ Եղիազարեանց	15
Բաղջագիւլ Ցովակիմեան	10
Սոփիայ Հոկոնիկեան	15
Սոփիայ Գէորգեան	20
Մարիամ Ափրիկեան	20
Քեռեմեան Բնունեանց	10
Աննայ և Եղիսաբէթ Շահխաթունեանց	20
Թամար Թարխանեանց	20
Մարիամ Զմշկեան	10
Իւլիա Տէր Ցովակիմեան	15
Սոփիայ Դեհկարխանեանց	15
Եղիսաբէթ Տէր Ցովսէփեան	10
Գիւլիզար Նաւասարդեան	20
Աննա Տէր Ցովակիմեան	15
Եղիսաբէթ Տ. Գէորգեան Տ. Ցովսէփեանց	10
Աննա Խուդաբաղչեան	10
Բրաբիոն Վանեցեանց	10
Նինա Մելիք Գ.ափլանեանց	10
Ովսաննայ Տէր Մովսէսեան	10
Սրբուհի Խուդաբաղչեան	10
Ջաւահիր Տէր Մարտիրոսեան	10
Մարգարիտ Մելիքեան	10
Մէհրի Ափրիկեանց	10
Գիւլում Պողոսեան	10
Եղիսաբէթ Ցովհաննէսեան	10

Ի ՏՓԽԻՍ.

Կատարինէ Թայիրեանց	25
Նունէ Էֆէնտեանց	25

ՑՍԼԷՄԱՆԴՐՈՊՈԼ.

Մարգարիտ Ասլանեանց	25
Սաղովմէ Զիլթողցեանց	25
Նինոյ Զիլթողցեանց	25
Սանդուխտ Սանասարեանց	20
Մարիամ Կոստանեանց	15

Ի ՎԼԼՐՈՒԴ.

Նոյեմզար Սամուէլեանց	15
	715

Մինոռաց Նուիրատուաց և Նուէրք Նոյա ի 1875 թուի.

Աղէքսանդր Թայիրեանց Երևանցի	200
Ռուբէն Ջալալեանց	19
Խաչատուր Ասլանեան Աղէքսանդրապոլցի	24
Ցովհաննէս Թամարգեանց, մի սաժէն վառելափայտ ի գին	18
Ներսէս Թայիրեանց, վառելափայտ երկու սայլ ի գին	10
Աղաջան, կառավարիչն Եղբայրսիրական Ընկերութեան Երևանայ աղքատ օրիորդաց թուղթ և գրիչ ի գին	5
Գումարն է	276

Ց. Մ. ԿԱԼԻՑԵԱՆՑԻ

ՆՈՒԷՐ

Ատրախանցի Հայազգի երկրորդ կարգի վաճառական Ցովհաննէս Մկրտչեան Կալէյեանց ընծայեալ որ 17 Ապրիլի տարեւոյս ընծայեաց յայնուն Օրիորդական դպրոցի Ատրախանայ զհոգեսնկական գետին 80 սաժեն երկայնութեամբ և 40 սաժեն լայնութեամբ, որ գտանի ի 5 դպրոցին քաղաքիս, յորոյ վերայ գտանին շինուած քարեր